18500

Ukrainica

Obrazy wsi

891.99
U-42

ԲԺ. ԱՐՇԱԿ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՄԻԱԿ ՈՒՂԻ

Պիես

Երկու Արարով

ՆՈՒԷՐ՝ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՇԽԱՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ԳԻՆ 25 ՍԷՆԹ

Լին, Մասս.
1933

891.99
Ա-42

891.99
Ա-42

19 NOV 2016
07 JUN 2005

ԲԺ. ԱՐՇԱԿ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՄԻԱԿ ՈՒՂԻ

ՊԻԵՍ

ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՎ

388

Ներկայացման արտօնութեան
համար դիմել Ամեր. Կոմկուսի
օրգան "Բանչուր"-ին՝ խմբագրութեան:

Լին, Մասս.

1933

5 .02. 2013

18301

41681-68

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Ջարլս Մըրֆի
Մէյրի, Նրա կինը
Տօմ/Թամ/, Նրանց որդին
Սիլվիա, Նրանց դուստրը
Ռոբըրտ Ֆուլըր
Էդվըրդ, Նրա որդին
Գորսկի
Պիտըր Ջիրիս
Մարքսեան
Ժողովի նախագահ
Նպարավաճառ
Կաթնավաճառ
Մէլըն, բուտլէգըր
Առաջին ոստիկան
Երկրորդ ոստիկան
Բանւորներ

Գործողութիւնը մեր օրերում, Ամերիկայի Միացեալ Նահանգներում:

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

Զարլս Մըրֆիի հիւրասենեակը, առաջին յարկի վրայ: Հիւրասենեակի դուռը աջ կողմից բացւում է փողոցի վրայ շեղակի: Նախագաւիթը բաժանում է դուռը հիւրասենեակից: Խորը դուռը անցք է տալիս տան ներքնամասի բաժանմունքներին: Ձախը տանում է դէպի ճեղնայարկ:

Զարլս Մըրֆի եւ իրենց կարգին - կաթնավաճառը, բութլէգըր Մէլըն եւ նպարավաճառը:

Մըրֆի

/անհամբեր/ Ո՞ւր մնաց անիրաւը: Առանց խմելիքի ես ինչպէս ապրեմ: /զանգ/ Վերջապէս: /սեղմում է ելեքտրա - կոճակը/:

Կաթնավաճառ

/հաշւի թուղթը երկարելով/ Հաճեցէք վճարել:

Մըրֆի

/սրտնեղած/ Դուք էլ ոչ ժամը գիտէք, ոչ ժամանակը: Գալիք շաբաթ կը վճարենք:

Կաթնավաճառ

Կաթ բերելը պիտի դադարեցնենք, եթէ ձեր պարտքին կէսը չվճարէք:

Մըրֆի

Որքա՞ն է:

Կաթնավաճառ

Մէկ դոլլար եւ հինգ սէնթ:

Մըրֆի

Գալիք շաբաթ: /կաթնավաճառը դուրս/ Բերանս ցամաքեց, կոկորդս չորացաւ: /զանգ/ Թակեմ գլուխը թէ որ ուրիշն է: /սեղմում է կոճակը/:

Նպարավաճառ

Բարեւ, պարոն Մըրֆի:

Մըրֆի

Ինչ կայ ետեւը: Այ սի...հասկացանք: Գալիք շաբաթ

Նպարավաճառ

Մեր պահանջատէրերը էլ չեն հասկանում:

Մըրֆի

Ե՞ս եմ մեղաւոր, որ չեն հասկանում: Նրանցն է յանցանքը կամ քոնը, որ չես բացատրում:

Նպարավաճառ

Ձեր պարտքից մի մաս...

ՄըրՃի

Փող չունեմ:

Նպարավաճառ

Ձուն՞ես: Արաղի փող ինչպէս ես ճարում:

ՄըրՃի

/բարկացած/ Հէրդ անիծած: /Նպարավաճառը կծկում է դուրս - բութլէգըր Մէլըն մտնում է/ Տօ,անիրաւ,ուր մընացիր: Համեցէք , համեցէք:

Մէլըն

/գրպանից հանում է մի շիշ ուիսկի/ Պատւական տեսակից...Ցնծայ:

ՄըրՃի

Ձե՞ն վստահում:

Մէլըն

Վստահութեան հարց չէ , վճարումի հարց է:

ՄըրՃի

/գրպանից հանելով/ Հաւ,լաւ.ահա երկու պըք/դուլլար զանգահարում են/:

Մէլըն

/յանՃնում է խմելիքը/ Պահիր , տես ո՞վ է գալիս:

ՄըրՃի

Ո՞վ որ էլ լինի թող դուրսը մնայ: /խմում է/:

Մէլըն

Ուր է տիկինը:

ՄըրՃի

Գնացել է որդուն դիմաւորելու:

Մէլըն

ԱրՃակո՞ւմ են բանտից:

ՄըրՃի

Էնպէս է երեւում:

Մէլըն

Տեսնելու բան էր: Հազարաւորներ բղաւում էին, պահանջում որդուդ ազատ արՃակումը:

ՄըրՃի

Իմ խաղաղ կեանքը խռովելու է նա կրկին: Ինչ անեմ էդպէս որդու հետ: /զանգահարում են ուժեղ/ Տրամադրութիւնս պիտի փչացնեն անիծա՛ծները: Տուր հա տուր,կաթի փողը,հացինը,նպարավաճառինը: Ո՞ր մէկը թւեմ: Գնանք... ետեւի դռնից: Փողոցն աւելի ապահով տեղ է: /դուրս/:

Նպարավաճառ

Ձեր պարտքից մի մաս...

ՄըրՃի

Փող չունեմ:

Նպարավաճառ

Ձունես: Արաղի փող ինչպէս ես ճարում:

ՄըրՃի

/բարկացած/ Հէրդ անիծած: /Նպարավաճառը կծկում է դուրս - բութլէգըր Մէլըն մտնում է/ Տօ,անիրաւ,ուր մընացիր: Համեցէք , համեցէք:

Մէլըն

/գրպանից հանում է մի շիշ ուիսկի/ Պատւական տեսակից...Ցնծայ:

ՄըրՃի

Ձեն վստահում:

Մէլըն

Վստահութեան հարց չէ , վճարումի հարց է:

ՄըրՃի

/գրպանից հանելով/ Լաւ,լաւ.ահա երկու պըք/դուլլար զանգահարում են/:

Մէլըն

/յանձնում է խմելիքը/ Պահիր , տես ով է գալիս:

ՄըրՃի

Ով որ էլ լինի թող դուրսը մնայ: /խմում է/:

Մէլըն

Ուր է տիկինը:

ՄըրՃի

Գնացել է որդուն դիմաւորելու:

Մէլըն

Արձակո՞ւմ են բանտից:

ՄըրՃի

Էնպէս է երեւում:

Մէլըն

Տեսնելու բան էր: Հազարաւորներ բղաւում էին, պահանջում որդուդ ազատ արձակումը:

ՄըրՃի

Իմ խաղաղ կեանքը խռովելու է նա կրկին: Ինչ անեմ էդպէս որդու հետ: /զանգահարում են ուժեղ/ Տրամադրութիւնս պիտի փչացնեն անիծա՛ծները: Տուր հա տուր,կաթի փողը,հացինը,նպարավաճառինը: Որ մնկը թւեմ: Գնանք... ետեւի դռնից: Փողոցն աւելի ապահով տեղ է: /դուրս/:

Տոմ եւ Գորսկի

Խօսակցութիւնը տեղի է ունենում տան դրան առաջ

Տոմ

Գնանք: Տանը մարդ չկայ:

Գորսկի

Բայց դու յոգնած ես:

Տոմ

Ոչինչ: Բանտի տանջանքը փոխարինելու միակ միջոցը աշխատանքն է, յեղափոխական հիմքով կառուցած: Փակենք այդ մասը: Այսօր պէտք է նախապատրաստենք կօշիկի գործաւորների գործադուլը: Արդիւնաբերութեան այդ ճիւղի սեզօնն է եւ ձեռնտու են պայմանները: Գործարաններում, աշխատանքի բոլոր բաժանմունքներում պէտք է կեդրոնացնենք մեր ուժը ստեղծելու համար գործարանային բջիջներ:

Գորսկի

Միակ միջոցն է մեր յաջողութեան: Ես էլ միշտ այն մտքին եմ, որ գործարանից ուղղելու ենք մեր մարտկոցները դէպի կապիտալիզմի խարխուլ բերդերը:

Տոմ

Գնանք:

Հիւրասենեակում

Մէյրի եւ Սիլվիա մտնում են

Մէյրի

Ուր մնաց, ուր մնաց եղբայրդ: Ինչու չեկաւ:

Սիլվիա

Կգայ, մայր:

Մէյրի

Աւելի քան հինգ ժամ է որ նա արձակուել է բանտից:

Սիլվիա

Ով իմանայ թէ որ ընկերոջ մօտ է գնացել:

Մէյրի

Որքա՜ն տանջուեց, որքա՜ն տառապեցաւ: Օ՜, իմ դժբախտ զաւակ, իմ հոգիի եւ շունչի թել: /զանգ/ Զաւակս է, դուռը բաց:

Սիլվիա

/բաց է անում դուռը/ Պարոն Ռոբերտ Ֆուլերը:/դուրս/

Մէյրի

Համեցէք, այս կողմ:

Ֆուլերը

Ինձ չէիք սպասում, այնպէս չէ՞:

Մէյրի

Ինչի՞ վերագրել, այս անակնկալը:

Ֆուլլը

Անցեալի վերաբերեալ մի խնդիր, որ կուզէի ճշդել:

Մէյրի

Լաւ:

Ֆուլլը

Կը ցանկանայի ձեզ հետ տեսնուել վաղը կէսօրից 10 վայրկեան անց, թիւ 45 Լինքոլն պողոտայ:

Մէյրի

Կը լինեմ ժամապահ: /Ֆուլլը մեկնելու վրայ/: մի վայրկեան խնդրում եմ:

Ֆուլլը

Կուզէիք մի բան ասել:

Մէյրի

Այո; խնդրում եմ մի գործ, մի ոեւէ գործ իմ որդու համար:

Ֆուլլը

Որպիսի գործ

Մէյրի

Կօշիկի վերաբերեալ մի որեւիցէ գործ:

Ֆուլլը

Դժուարին հարց:

Մէյրի

Հասկանում եմ: Գիտեմ գլխացաւանք է, բայց...

Ֆուլլը

Քո որդու ներկայութիւնը իմ գործարանում այնքան էլ փափաքելի չէ:

Մէյրի

Ինչո՞ւ հէնց իմ որդու: Ինչ՞ է արել, գողացել, վատ գործ է արել, թէ ուրիշի հացին, գործին աչք է տնկել:

Ֆուլլը

Աւելի վատն է արել:

Մէյրի

Աւելի վատը: Ինչ՞:

Ֆուլլը

Համայնավար է: Կարմիր, է, կարմիր: Նա ուզում է հիմքից կործանել այս դրութիւնը: Նա մոռացել է՝ քաղաքացիի իր պարտականութիւնը:

Մէյրի

Ես միայն գիտեմ, որ նա մոռացել է ինձ, իր մօրը, քրոջը, բայց ոչ իր ընկերին, ընչազուրկ բանւորին:

Ֆուլլը

Լաւ ուրեմն, մոռացիր եւ դու:

Մէյրի

Մոռանալ որդո՞ւս: Ես քեզ մոռացայ, քեզ, բայց որդո՞ւս օ՜, չասես, չմտածես:

ՖՈՒԼԸՐ

Տեսնենք թէ ինչ կարող ենք անել քո որդու համար:

ՄԷՅՐԻ

Այդ դարձուածքներին վաղուց ծանօթ եմ: Վերջին խօսք եմ ուզում:

ՖՈՒԼԸՐ

Այդ չսիրեցի: Հնարաւորութիւնը եթէ թոյլատրի...

ՄԷՅՐԻ

Ցիշիր անցեալի քո խոստումները:

ՖՈՒԼԸՐ

Ցիշողութեան այդ դառնութիւնը ինչու՞ ես ապրում: Ոչ չի ունեցել յոյսի , երազի այդպիսի պատկեր:

ՄԷՅՐԻ

Ճիշդ է , եւ ճիշդ է նոյնպէս որ չեմ սնուցել վրէժխնդրութեան ոգի, ոչ էլ փոխյատուցումի միտքն եմ ունեցել ինչու: Որովհետեւ նամուսից վերջ իմ հոգում բարձր ու անմատչելի է մնացել վիրաւորուած արժանապատուութեանս զգացումը: Իսկ այսօր իմ զաւակների սիրոյն, ընտանեկան անդորրի համար խեղդում եմ իմ մէջ այդ զգացումը եւ լքուած սիրոյ հպարտութիւնը եւ խնդրում եմ, այո, խնդրում....

ՖՈՒԼԸՐ

Մի պայման...

ՄԷՅՐԻ

Խնդրում եմ ...

ՖՈՒԼԸՐ

Որ էլ չես պատմի, ոչ մի դէպքում, թաղուած անցեալը:

ՄԷՅՐԻ

Համաձայն եմ:

ՖՈՒԼԸՐ

Նոյնպէս որդիդ պէտք է համակերպի գործարանի պայմաններին:

ՄԷՅՐԻ

Շնորհակալ եմ:

ՖՈՒԼԸՐ

Մնաս բաեւ:

ՄԷՅՐԻ

Գնաս բարեւ: /ՖՈՒԼԸՐ գնում է դուրս/

/, ներս է մտնում ՄԸՐՖԻ/

ՄԸՐՖԻ

/կէս հարբած: Կատում է դրան սեմքին ՖՈՒԼԸՐԻ մէջքից/ Կնիկ, հինցած է, մաշած է, մաշած...

ՄԷՅՐԻ

Ինչ է մաշած:

Մըրցի

Ուրկանդ,ուրկանդ ....

Մէյրի

Ինչ՞ ես ուզում ասել:

Մըրցի

Ով է մարդը...Տարփածուդ:

Մէյրի

Հանդարտի՛ր,Զարլ,հանդարտիր:

Մըրցի

Անունը,անունը ասա,անառակ:

Մէյրի

Ո՛չ,դու չես այդպէս խօսողը....դա խմիչքն է:

Մըրցի

Խմի՞չքը ... անառակ կնիկ,ասա,ով՞ էր,ով՞ էր տարփածուդ:

Մէյրի

Իմ այն տարիքում...Ինչեր ես ասում...

Մըրցի

Տարիքը արգելք չի լինի: Միթէ քիչ են էն կնիկները որոնք իրանց կեանքի վերջը ջէզ են պարում,յիսունն էլ անց ամուսնանում են քսան տարեկան երախաների հետ:

Մէյրի

Աստուած իմ,ամօթ է,ամօթ: Մեղքացիր ինձ...

Մըրցի

Ձեր ամօթին էլ,ամօթխածութեանն էլ:

Մէյրի

Դու չե՞ս զգում խօսքերիդ վիրաւորանքը:Դու անարգում ես քո տան նամուսը,սրբութիւնը:

Մըրցի

Մէկ անգամ խաբուել եմ...էն իմ կամքովն էր: Էդ բանի համար փառք տուր էս խմիչքին: Բայց էլ չես կարող ինձ նորից խաբել:

Մէյրի

Ես քեզ չեմ խաբել եւ խաբելիք էլ չունեմ:

Մըրցի

Այսօրուայ նման յիշում եմ անցեալը: /խմում է/ Յիշում եմ էն օրը,երբ սիրականդ քեզ ինձ պարգեւեց,օժիտն էլ հետը կանխիկ դրամով: Բայց ես չէի,էն էս խմիչքն էր, որ թարգման եղաւ իմ ցանկութիւնների: Նոյն խաղը էլ չես կարող սարքել ծերացած գլխիս:

Մէյրի

Ձափը անցնում ես,էլ չեմ կարող քեզ լսել...

Մըրցի

Ինչ՞...

Մէյրի

Ամուսնուս անհաւատարիմ չեմ եղել, ոչ էլ միտքս եմ ունեցել:

ՄըրՃի

Բայց ո՞վ էր էդ շունը, էդ անամօթը, ասա...

Մէյրի

Մարդ, խելքդ տուն կանչիր:

ՄըրՃի

/բռնելով կոկորդից/ Ասա, թէ ոչ կը խեղդեմ:

Սիլվիա

/ներս մտնելով/ Հայր, հայր...

Մէյրի

Նա...պարոն Ֆուլերն էր:

ՄըրՃի

Պարոն Ֆուլերը, պարոն...

Մէյրի

Նա խոստացաւ Տօմին գործ տալ իր գործարանում:

Սիլվիա

Խոստացա՞ւ:

Մէյրի

Այո, խոստացաւ:

ՄըրՃի

Կորէք, կորէք աչքիցս: Ասես մի կատաղութիւն փոթորկում է հոգուս մէջ: Մի ձեռք ճանկռտում է սիրտս: Օ, անիծեալ համակերպութիւն: Կեանքի սէրը մեռել է ինձ համար եւ շուտով պիտի գնայի, վերջ տայի կեանքիս, եթէ դուք անգին հեղուկ չխօսէիր նրա մասին: /զանգ/ Ինչ էք սպասում: /Սիլվիան բաց է անում դուռը/ Գնացէք, կորէք:

Սիլվիա

Մայր, եղբայրս:

Մէյրի

Զաւակս: /Տօմ եւ Մէյրի գրկւում են/

Տօմ

Ինչ՞ կայ...Ինչ՞ է պատահել, հայր:

ՄըրՃի

Ոչինչ, ոչինչ, ամուսնացել եմ, զաւակ եմ ունեցել...

Տօմ

Այո, յետո՞յ:..

ՄըրՃի

Այդքան: /գտքի ելած պահուն խմիչքի շիշը ընկնում եւ փշրւում է/: Նահլաթ չար սատանայ:

Տօմ

Այդ հեղուկը մի օր քեզ էլ կը փշրի, հայր:
/ՄըրՃին նայում է որդուն եւ գնում է դուրս/

Տom

Հաւաքիր,Սիլվիա,միացրու այդ կտորները...բայց ոչ չէ կարելի: Անպէտք է,անգործածելի:/Սիլվիան ժողովում է կտորները:/ Զգոյշ,ձեռքդ չարիւնես:/" " տանում է/:

Մէյրի

Ինչո՞ւ ուշացար,որդի:

Տom

Ընկերների մոտ էի:

Մէյրի

Բանտից վախենում եմ,որդի: Քո ստացած ծեծը,անլուր տանջանքը ինձ ծանր է գալիս,ծանր:

Տom

Բանտը միայն կեղծ խաղաղասէրներին է վախեցնում , բայց ոչ գաղափարական մարդուն:

Մէյրի

Այս աշխարհում աչքիս միայն դու ես որ կաս,զաւակս

Տom

Եսասիրութիւն է,մայր: Զափազանց նեղ սահմանի մէջ: Սիրտդ լայն բաց,լայն,սիրի՛ ողջ աշխարհը:

Մէյրի

Այդ աշխարհում ես միայն քեզ կը տեսնեմ:

Տom

Չեմ ուզում որ իրերը այդպէս տեսնես: Ամեն օր հալ ուում,մաշւում ես,մաշւում հոգեպէս եւ ֆիզիքապէս: Ինչու ինչու,մայր: Քո որդու նման հազարաւորներ կան:

Մէյրի

Եւ հազարաւոր մայրեր:

Տom

Այդ հազարաւորները ոչ թէ առանձին,այլ միասին մը-տածելու , սիրելու պայքարելու են:

Մէյրի

Իմ որդու ցաւն եմ զգում,աչքերս միշտ քեզ են փընտ ռում: Այդ ցաւը այնքան խորն է եւ այնքան ուժեղ,որ մը-տածում եմ միայն նրան մեղմելու մասին:

Տom

Ինչպէս , մայր: Ուզում եմ լսել:

Մէյրի

Ամեն ջանք արի,վերջապէս քեզ մի գործ ճարեցի:

Տom

Ո՞վ ասաց,որ ինձ գործ ճարես:

Մէյրի

Ո՞վ պիտի ասէր,որդի:Գիտեմ որ կարիքներ ունես բաւ արարելու:

Տom

Յետո՞յ:

Մէյրի

Պարոն Ֆուլլերը ինձ խոստացել է որ քեզ գործ պիտի տայ:

Տոմ

Շնորհակալ եմ, մայր, եւ կը լինեմ կրկնապէս, եթէ այլ առթիւ այդպիսի աշխատանք ինձ համար չկատարես:

Մէյրի

Վատ գործ եմ արել:

Տոմ

Այդ անպիտանի մօտ չեմ կարող աշխատանք տանել:

Մէյրի

Ինչո՞ւ անարգանք այդ մարդու դէմ:

Տոմ

Մասնակի ոչինչ: Այդ դասակարգում իրարից տարբեր մարդ չես գտնի: Բոլորն էլ խոզերի ագահութիւնը եւ գայլի ախորժակը ունեն:

Մէյրի

Մտածիր, որդի: /զանգ-Սիլվիան որ մտնում էր այդ պահուն, գնում է դուռը բանալու/: Զրկւել ենք ապրելու ամեն միջոցից: Տունն էլ արդէն վտանգի տակ է: Թէքսը չենք կարող, պարտքը չենք կարող:

Էդվըրդ մտնում է

/յառաջանալով/ Կը ներէք որ ընդմիջեցի:

Մէյրի

Խնդրեմ, նստեցէք: Տոմ, Պարոն Ռոբերտ Ֆուլլերի որդին, պարոն Էդվըրդ: /Տոմ հազիւ թէ գլխով բարեւում է/

Էդվըրդ

Ցաւում եմ, տիկին, ձեզ հաղորդելու, որ ձեր տան մորթգէյջի վճարման ժամանակը վաղուց անցել է: Կորուստից փրկելու միակ միջոցը անվճար մնացած դումարի միանւագ վճարելն է:

Մէյրի

Անհնարին է, անհնարին:

Էդվըրդ

Անհնարին:

Մէյրի

Աւելի քան:

Էդվըրդ

Օրէնքն այդ չի ճանաչում:

Մէյրի

Խնդրում եմ մի առ ժամանակ էլ յետաձգեցէք: Մի ճար կանենք բաւարարելու ձեր պահանջը:

Էդվըրդ

Օրէնքի հարկն է, տիկին: Ցաւում եմ, եւ խորապէս, որ զրկւում էք սեփականութեան ձեր իրաւունքից:

Տom

Ցաւո՞ւմ էք: Անշուշտ,..ցաւում էք որ աւելի վատը չէք կարող անել:

Էդվըրդ

Ինչ է ձեր միտքը: Դեռ գոհ էլ չէք,որ ուրիշի փողով էք այս տունը բնակում: Տան արժէքի մէկ տասներորդն էք միայն տուել,մնացածը...

Տom

Դուք էք տուել,բայց ինչո՞ւ:

Էդվըրդ

Տուել ենք որ ձեր նմանները ապերախտութեամբ փոխարինեն վեհանձնութեան այդ չափը:

Տom

Ձեր օրէնքը ճանաչո՞ւմ է վեհանձնութիւնը:

Մէյրի

Որդե..

Էդվըրդ

/Մէյրիին/ Նա չի գիտէ թէ ինչպէս են դառնում սեփականատէր:

Մէյրի

Հէնց այդպէս էլ մենք ունեցանք այս տունը:

Տom

Քոնն է այս տունը,մայր:

Էդվըրդ

Ձեր պարտքի պատճառով օրէնքն այդ չի թոյլատրում:

Տom

Բայց օրէնքը,մայր,անշուշտ թոյլատրում է,որ իրանց մարդասիրաբար տուած դրամին հետ միասին առնեն ձեր սէնթերի խնայողութեամբ այդ նպատակին արդէն յատկացուած գումարը:

Մէյրի

Ինչ անենք , որդի,այդպէս է գրուած օրինագրքում:

Տom

Նրանց գրքում,շահագործող դասակարգի գրքում:

Էդվըրդ

Ինչ շահագործող,ինչ դասակարգ: Ինչեր էք ասում: Դե մոկրատիայի այս ազատ երկրում այդպիսի զառանցական մտքեր

Մէյրի

Միթէ ուղիղ չէ,Տom:

Տom

Դեմագոգների այս ազատ ասուած երկրում իշխում է միայն շահագործող դասակարգի-բանկիրների եւ ճարտարարուեստի մեծ պարոնների տիրապետութիւնը: Գործարանատէրերի հաշուին ենք աշխատել,գործել ենք նրանց օգտին: Մինչդեռ մենք ենք կառուցել գործարանները,երկաթուղիները,պալատներն ու

քաղաքները: Հանքային հարստութիւնները դուրս ենք բերել մեր եղունքներով եւ ստեղծել հոյակապ պատմական արժէքներ: Եւ ինչ ենք ստացել փոխարէնը: Այն շղթան որ այսօր ուզում ենք փշրել: Ոչ հանքը, ինչ հանգիստ է ունեցել երբ եւ է բանտորը: Այո, միայն կնանքի մշակաւանը: Նախով կնանքի այսօր մեր սլտում, ոչ այլ անոթի օրերի գալիք դժբախտ հաւանականութիւնը: Օրը ապրել ենք դարերի տանջանքով, դարերի տնտեսութեամբ:

ԷԴՎԸՐԴ

Ո՞վ է հարկադրել ձեզ:

ՏՕՄ

Ձեր շահագործման սիստէմը; ձեր օրէնքն իր դատական եւ բանտային դրութեամբ, ձեր մամուլը եւ դպրոցները, ձեր կրօնը եւ եկեղեցիները...

ԷԴՎԸՐԴ

Անարժան քաղաքացիի խօսք է անում: Այդ մտայնութեամբ, այդ գաղափարներով ոչ միայն բնակարանի, այլ եւ հացի կարօտը կը քաշէք: /ոտքի է ելնում/

/ Մտնում է Մըրցի/

ՏՕՄ

Այո, եւ ահա թէ ինչու ուզում ենք ձեր դրութիւնը հիմքից կործանել:...

ՄԸՐՑԻ

Ինչեր ես ասում, այ տղայ: /ԷԴՎԸՐԴԻՆ/ Նստեցէք, նստեցէք, պատիւ էք արել մեզ այցելելով:

ԷԴՎԸՐԴ

Այդ պատից ձեր որդին սեւելի մեծ չափով բաժին հանեց ինձ արդէն: Նա չի հանդուրժում կարգ ու կանոնին: Իր վիճակից դժգոհ մեզ է վերագրում ձախորդութիւնը:

ՄԸՐՑԻ

Երկաթից, որքան էլ ծեծես, ոսկի դուրս չի գայ: Իրա ծնողքի ցաւերին եւ կարիքներին անզգայ որդուց բան ակընկալել, չէ, բարեկամ, կարելի բան չէ:

ՏՕՄ

Եթէ պատիւ չէ քեզ համար, ինձ համար պարծանք է որ ես ծնուել եմ աղքատի զաւակ: Եթէ ոչ այսօր, դէթ ժամանակին հալալ եւ չարաչար աշխատանքի վարձքով ապրող մի հօր զաւակ եմ, մի հոր, որ չէ խաբած, չէ շորթած եւ որի հացին յաւելեալ արժէքը չէ խմորուած:

ՄՐՑԻ

/շոյելով ԷԴՎԸՐԴԻ կռնակը/ Ցամենայնդէպս մենք ճանաչում ենք մեր բարեկամն էլ, մեր թշնամին էլ: Ձեր օգնութեամբ կարողացանք տուն տեղ ունենալ եւ...

ԷԴՎԸՐԴ

Այո, սակայն վճարումի ժամանակն անցել է եւ այդ պա-

ըագան հարկադրում է մեզ օրինական միջոցների դիմելու հակառակ մեր բարի կամեցողութեան:

Տոմ

Այսինքն դուրս շպրտելու բանուորին իր տնից:

Մըրցի

Էդ պէս է աշխարհը,էդ պէս է դրուել աշխարհի հիմը,էդ պէս էլ կը մնայ: Իմ պապից,հօրից նոյնն եմ տեսել,նոյնը անփոփոխ: Փոխանակ խօսելու,լեզուիդ զօր տալու,գնա նոյն ճանապարհով,նոյն ցուցմունքներով: Թէ որ էստեղ չես գըտնում,գնա մէկ ուրիշ տեղ,մինչեւ որ գտնես գործի ու կեանքի աւելի լաւ պայման:

Տոմ

Մենք կանենք հէնց ճիշդ դրա հակառակը,մինչեւ որ ամեն տեղ կը հարկադրենք մեր պայմանները:

Էդվըրդ

Այդ ընթացքով ամենից առաջ կը կորցնես քո տունն ու տեղը:

Տոմ

Տունը...ուր ուրճանում է անհատի եսապաշտ ոգին:Տունը,հարստի այդ ժայռը բանուորի ուսին բեռցուած: Մենք կը գլորենք այդ ժայռը:

Մէյրի

Մեղքացիր քո ծնողներին:

Տոմ

Ինչ՞ու այդ զատորոշումը,ինչ՞ու հէնց իմ ծնողներին: Մեզ նման հազարաւորներ կան...

Մըրցի

Լռիր,դու անարգում ես տունը,ծնողքդ,ընտանեկան սըրբութիւնը:

Տոմ

Ես այդ չեմ անում:Այդ երորդութիւնը հարստների պայքարի եւ խաբեութեան կուանն է կազմել: Այդ միջոցներով ընկճում են բանուորին,պայքարողին:ստրկացնում ընտանիքի հօրը,նրա առաջ պատկերացնելով իր զաւակների,սիրելիների անօթի եւ թշուառ վիճակը,խոնարհեցնում ընդվզող երիտասարդի փոթորկումները,օգտագործելով ծերացած մի մօր սէրը եւ որբացած մի քրոջ արցունքները: Երբ կը մոռանանք այդ երորդութիւնը եւ կը փշրենք մեր շղթաները յանուն ընդհանուրի բարօրութեան,միայն այն ժամանակ հիմքից քանդած կը լինենք հին աշխարհը եւ կը կերտենք նորը,կը հիմնենք մեր նոր տունը,մեր նոր ընտանիքը...

Մըրցի

Էլ բաւական է,կորիր,կորիր աչքիցս: /Էդվըրտ փորցում է հանդարտեցնել նրան/ Էս տունը գլխիդ փուլ կը բերեմ: Ապրել ես միայն որ մեզ ցաւ տաս: Կորիր,կորիր,ասում եմ

Մէյրի

Գնա, որդի, գնա:

Տօմ

Ցաւում եմ խօսքերիդ, հայը:../ուղղւում է դէպի դուռը, որը յանկարծ բացւելով ներս է մտնում Սիլվիա/:

Սիլվիա

Տօմ, դրացիին տնից դուրս են հանում:..ոստիկանները դուրս են թափում կարասիները...

Մէյրի

Աղաչում եմ, որդի, մի գնա այնտեղ, մեղքացիր ծնողքիդ:

ՄըրՃի

Ո՞վ է էդ լակոտը, որ ինձ մեղքանայ: /Տօմը նետւում է դուրս/: Բոլորդ էլ դեւ էք երեւում: Մայրը որ խաբի էլ որդու արածը ինչ կը լինի: Ասա որ սուտ եմ, ասա որ երեւակայութիւն է:/Սիլվիա արտասւում է/ Ահա մի արցունքի լիճ: Ինչ է ինձ բերել: Ինչ է տւել ինձ: Երբ աշխատանքի մասին ես ասում, ճառում է համեստութեան, ազնւութեան մասին: Էլ տանելի բան չէ էս դրութիւնը: Քարը ձեր գլխին: Գնամ կոկորդս թրջեմ:/Մէյրիին/ Ասա որ խմիչք չկայ... /ՄըրՃի եւ Մէյրի դուրս են գնում/:

Էդվըրդ

Դու լաց մի լինիր: Արցունքներդ ասես սիրտս են հեղեղում եւ միանգամայն տալիս են նրան մի ինչ որ նոր կենդանութիւն:

Սիլվիա

Իմ արցունքները առատ են եղել, միշտ լացել եմ, շատ անգամ բոլորի համար: Բայց ոչ ոք չէ սիրել իմ արցունքները:

Էդվըրդ

Այդ արցունքները սնուցել են քո հոգին, քո սիրտը, այնպէս, ինչպէս ցողի կաթիլները սնուցել են մանիշակը լերան լանջին:

Սիլվիա

Այդ ինձ չեն ասել եւ հաւատալը երազ է թւում:

Էդվըրտ

Երազ չի թւալ, միայն թէ պատեհութիւնը տրւէր ինձ ներբողելու ճառագայթումները քո աչքերի եւ պատկերացնելու խաղերը քո հրապոյրի:

Սիլվիա

Այդ բոլորը ոչինչ չեն ասում: Վաղը...վաղը չգիտես ինչ կը լինի:

Էդվըրտ

Վաղը շատ բան կը ծնի: Ծանօթութիւնը բարեկամութեան հիմքը կըստեղծէ, եթէ փափաքես մեր յաջորդական տեսակցութիւնները:

Սիլվիա

Թերեւս...կարելի է:

Էդվըրդ

Ուրեմն...

Սիլվիա

Ցը.../Այդ ռոպէին ներս է մտնում Մըրֆի/

Մըրֆի

Ապրեպ աղջիկս: Տեսնում եմ ձեր բարեկամութիւնը:փակ ւած,հեռու մնալով ոչինչ չես շահի:..գնում ես,Էդվըրդ, ցտեսութիւն:

Էդվըրդ

Ցտեսութիւն:/դուրս է գնում/

Սիլվիա

Ինչպէս թէ ոչինչ չեմ շահի:

Մըրֆի

Մեծացել,հասակ ես արել: Ինչ կարժէ եթէ չես կարող աստծոյ տւած շնորհներից օգուտ քաղել:

Սիլվիա

Բայց ես ինչ կարող եմ անել:

Մըրֆի

Շատ բան թէ որ կամենաս: Քո ամբողջ կեանքի անուշ շրջանն ես բոլորում: 16 գարունների արժէքը շատ բարձր է: /զանգ/

Սիլվիա

/դուռը բանալով/ Համեցէք ներս:

Ներս է մտնում Ռոբերթ Ֆուլըը

Մըրֆի

Էսկողմ,համեցէք էսկողմ: Աղջի մարդ ասա,որ կենաց ջրից մեզ պատիւ անի: Ասա որ անսպասելի հիւր ունենք:

Սիլվիան դուրս է գնում

Ֆուլըը

/մեկուսի/ Ինչ խորոտիկ աղջիկ է: /Մըրֆիին/ Ումն է այդ աղջիկը:

Մըրֆի

Իմն է,իմը չէ:

Ֆուլըը

Ինչպէս:

Մըրֆի

Վանդակի թռչուն,վաղը կը թռի

Ֆուլըը

Մէկ ուրիշ վանդակում աւելի ամուր փակելու համար:

Մըրֆի

Էհ, աշխարհքի բան է: /ներս է մտնում Մէյբի օղիով եւ մէզէով/: Աւելի ճիշդը սրա աղջիկն է:

Ֆուլըը

Բարեւ տիկին...երեւի բաժասել էք.աղջիկը մարը,տղան հարը:

հօրը:

Մըրցի

Երկուսն էլ մօրը,թող հալալ լինի: Ոչ մէկը հօրը նը ման չէ: Մին խելքից դուրս մտքեր է յայտնում,իսկ օրիորդը արցունքի լիճ է:

Ֆուլըը

Շատ խիստ էք վարւում: Տիկին,իր ասածներին համակար ծիք չեմ:

Մէյրի

Մարդկանց համար վատը շատ վատ է,իսկ լաւը շատ լաւ: Միջակի մասին գաղափար չունեն:

Մըրցի

/խմում է/ Կնիկ.տես որ էս ջրի վերջը չլինի: Քիչ անգամ քէֆ անելու բախտը կունենամ էսպէս մի բարեկամի հետ:

Ֆուլըը

Ձեր որդու համար գործը պատրաստ է:

Մըրցի

Անիրաւը չի ուզում գործել:

Մէյրի

Կաշխատեմ,մի փորձ էլ կանեմ: Յամենայն դէպս շնորհակալ եմ:

Մըրցի

/Մէյրի գնալու վրայ է/: Ուշադիր եղիր,որ մարդ ներս չգայ:/Մէյրի գնում է դուրս/: Խմիր,ինչ ես մտածում:

Ֆուլըը

Այն,թէ ինչպէս կարողանանք թեթեւացնել ձեր վիճակը:

Մըրցի

Էդ դէպքումն էլ,կենացդ:

Ֆուլըը

Մի հատ էլ խմիր:

Մըրցի

/խմելով/ Երախտապարտ եմ:

Ֆուլըը

Ինչ կասես: Եթէ փոխանակ եղբօր քրոջը մի գործ տանք մեր գրասենեակում:

Մըրցի

Հրաշալի միտք:Էդ առաջարկը երկրորդումեմ/լաւ կոնծելով:/խմում է/:

Ֆուլըը

Ես էն կարծիքին եմ,որ նա շուտ կը սովորէ եւ եթէ հաճելի եւ կամակատար լինի մեծի թելադրանքներին,այդ դէպքում փողի մասին էլ մտածելիք չէք ունենայ:

Մըրցի

Այո,այո,փողի մասին էլ չենք մտածի,ոչ էլ օղիի:Թող

իմ աղջիկը համակերպի եւ անի ինչ որ կը կամենաք...

ՅՈՒԼԸԸ

Դէ , ուրեմն ուղարկեցէք նրան ինձ մօտ:/տեղից վեր է ելնում/: Ցտեսութիւն:

ՄԸՐՅԻ

Ցտեսութիւն,ցտեսութիւն պարոն Յուլըը:/Նրան ճանապարհ է դնում մինչեւ դուռը-Յուլըը դուրս է գնում/: Ինչ բախտ,ինչ բախտ Մըրցի...Փողի մասին էլ մի մտածի:

ՎԱՐԱԳՈՅՐ

ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. Մյասնիկյան

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Զարլս Մըրֆիի հիւրասենեակը

/Տեղի ունի կուսակցական ժողով: Ներկայ են Տօմ, Գորսկի, Մարքսեան, Պիդըը Զիրիս եւ այլ բանւորներ: Մին նախագահում է: Ժողովի շարունակութեան բարձրանում է վարագոյը/

Նախագահ

Ընկերներ, լսեցինք բիւրոյի զեկոյցը եւ վաւերացրինք մի կարգ փոփոխութիւններով: Անօթի երեխաների դատավարութեան զեկուցումը պիտի անէ ընկեր Գորսկի:

Գորսկի

Ընկեր նախագահ եւ ընկերներ, համաձայն նախապէս տրուած որոշման հրապարակային դատավարութեան հրաւիրեցինք քաղաքապետին: Այս պարագան թռուցիկով հաղորդեցինք աշխատաւորութեան: Բեմի վրայ դրուած էր երկու սեղան; Մէկը, հարստի սեղանը ճոխ համեմներով, իսկ միւսը, չքաւորինը, մի կտոր հացով-պատկերացում երկու վիճակի: Անգործների խորհրդի կազմակերպչի մերկացումներին յաջորդեց երեխաների հրապարակային հարցաքննութիւնը: Երեխաների անօթի, բոպիկ եւ կիսամերկ դրութեան պատկերացումը անհանդուրժելի թւաց քաղաքապետին, որ ուզեց իսկոյն մեկնիլ: Նա բողոքեց, բայց ի զուր, մասսան պահանջում էր նրա ներկայութիւնը: Բժշկական տեղեկագիրը հաստատում էր, որ քննուած երեխաների երկու երրորդը, հետեւանք սննդի պակասին, ֆիզիքապէս վատառողջ էին: Քաղաքապետը ըստ իր սովորութեան, խոստացաւ անել ձեռքից եկածը, փորձելով արդարանալ: Բայց աշխատաւորութիւնը տուեց իր պատասխանը, արձանագրելով եւ միանալով անգործների խորհրդին:

Պիդըը Զիրիս

Այդ դատավարութիւնը, ընկերներ, հիմքը կազմեց մեր գործարանների բջիջների կազմութեան: Այցելեցինք արձանագրուողներին եւ նրանց միջոցով նաեւ իրենց բարեկամներին, գործաւոր ընկերներին: Հետեւանք տասնօրեայ ներուժ աշխատանքի ստեղծեցինք գործարանային բջիջներ: Նախապատրաստական բոլոր աշխատանքներն արդէն ամբողջացած են, թռուցիկները պատրաստ վաղւայ մասսային միդինգի համար, քէֆով վճռելու գործադուլի խնդիրը:

Նախագահ

Խօսքը ընկեր Մարքսեանինն է:

Մարքսեան

Ամերիկեան Սէնատը, Ուոլ Ստրիտի քաղաքական այդ գործակալները մերժում են ի նկատի առնել միլիոնաւոր անգործնե-

րի կողմից կազմակերպված քաղցարշաւի ներկայացուցիչների պահանջները: Պէտք է հասկացնենք Ուոլ Ստրիտին, Դեմոկրատների կոնգրէսին, որ 15 միլիոն անգործներին վերաբերեալ այրող միակ խնդիրը ֆեդերալային կանխանպաստի եւ ընկերային ապահովագրութեան վճարումը պիտի լինի կառավարութեան եւ գործատէրերի հաշւին: Հակառակ բոլոր խոչընդոտների, կառավարական գործակալների եւ ոստիկանների անհամար գրգռումների եւ սպառնալիքների, քաղցարշաւը, թւով 3.000, օրինակելի եւ մեծ կարգապահութեամբ շարունակեց իր ճամբան: Անցանք Քըմբըրլէնտը եւ մտանք Ուաշինգտըն Ամերիկեան Կոնգրէսին ներկայանալու համար: Ընկերներ, պիտի գայ օրը, երբ քաղցարշաւի անցած ճամբաներով պիտի անցնի յաղթական Սովէտ Ամերիկայի Կարմիր Բանակը:

Նախագահ

Այժմ պիտի զեկուցէ ընկեր Տօմ:

Տօմ

Ընկերներ, երբ բանւորութիւնը պատրաստւում է արիւնոտ պայքարների, երբ տնտեսական տագնապի խորացումը ոչնչացնում է կապիտալիստների յոյսերը, պէտք է չանք թափենք որ մեր կուսակցութիւնը քարշէ իր ետեւից ողջ Ամերիկեան բանւորութիւնը: Մեր մէջ արմատացած սեքտէրիզն տրամադրութիւնները, որ մեկուսացնում են կուսակցութիւնը մասսայից, պէտք է վերացնել սիստէմատիկ աշխատանքներով: Մեզ մասսային միացնելու, կամրջելու միակ միջոցն է ստեղծել միացեալ ճակատ վարի խաւերից; խորտակելով բոլոր արգելքները, որոնք դանդաղացնում են բանւորութեան վազքը դէպի նպատակակէտը: Ուրեմն, վերջ տանք աղանդաւորութեան եւ դիմենք մասսայական կռւի ընդդէմ քայքայւող կապիտալիզմի: Ահա միակ գիծը, միակ ուղին:

Նախագահ

Օրակարգի հարցերը սպառւած են: Հիմա բաժանենք մեր մէջ թռուցիկները, որ պիտի ցրւենք հէնց այս երեկոյ: Ժողովը փակւած է: /իւրաքանչիւրը վերցնում է իր բաժին թռուցիկները եւ բոլորը մեկնում են բացի Տօմից/:

/Քիչ վերջ ներս է գալիս Մէյրի/

Տօմ:

Տօմ

Ինչ է, մայր:

Մէյրի

Բանտից նոր ելած կրկին դու այդ կրակին մէջ ես գըձում քեզ:

Տօմ

Այդ կրակի միջով է, մայր, որ պիտի անցնենք:

Մէյրի

Եւ յետոյ...մինչեւ երբ:

Տոմ

Մինչեւ որ կը հաստատենք բանւորների եւ Ֆարմերների իշխանութիւնը:

Մէյրի

Ծանր է որդիս,ծանր:

Տոմ

Չկայ ուրիշ ելք բացի յեղափոխութիւնից: Թշւառութեան ծայրն են հասել անթիւ հազարներ,միլիոնաւորներ : Անտառներում,սարերի լանջին,ուր մայր չկայ,անօթի,թշւառ երեխաների բազմաթիւ խմբեր են թափառում:

Մէյրի

Նրանց վիճակը բարելաւելու միջոցներ շատ կան:Բարեսիրական ընկերութիւնների անելիքը ինչ է: Տեղին է յիշել Լաճերի գործը:

Տոմ

Լաճերի գործը:Այո,ինչու՞ չյիշենք ապականութեան այդ բոյների սխրագործութիւնները:

Մէյրի

Այդպէս մի խօսիր,Տոմ:

Տոմ

Ես ճշմարիտն եմ ասում: Ուղիղն ինձ համար ուղիղ է: Հոգ չէ թէ ինչ գին վճարեմ խօսքիս: Կապիտալիզմի ծթրած, ստորերկրեայ այդ բոյները այլասերումի ամենավատթար գործն են կատարում:

Մէյրի

Մեղանչում ես,Տոմ,չես ճանաչում:

Տոմ

Լաւ եմ ճանաչում աղանդամոլ այդ մարմինները: Գնալ նրանց մօտ եւ դառնալ ընկեր,ոչ.աւելի լաւ է անտառներում ընկեր որոնել:

Մէյրի

Այդ չէի սպասում քեզնից: Այդքան խիստ լեզու մոլեռանդ մարդու յատուկ է միայն:

Տոմ

Այո,լաւ է գնալ անտառ քան այդ Լաճերի մօտ,որոնք սարքում եւ ցուցադրում են պոռնիկեան կեղտոտ գիշերներ: Այդ տեղ են ժամադրւում իրար գտնելու գայլը,բորենին , երիտասարդ վավաշոտը,ծերացած մարդը,անատամ,պագշոտ նայւածքով,մարդիկ որ հետեւում են վարձկան պսրուհիի մերկ գարշապարին եւ աղբացած մարմնի եղկ շարժումներին:

Մէյրի

Թող ես չլսեմ,թող չիմանամ: Խնայիր քեզ,խնայիր մօրը:

Տոմ

Եթէ մի քիչ մեղմէիր զգացումներդ...

Մէյրի

Ցրբեմն հասկանում եմ,ասես հաշտւում եմ կռիւ տանելու գաղափարի հետ,բայց թէ կռւում շատեր կընկնեն, դու էլ գուցէ նրանց ջարքերում,որդի եղիր խոհական...

Տոմ

Այո,եւ պարտաճանաչ:/ընկերանում է մօրը միչեւ դուռը,եւ մինչ Մէյրին դուրս է գնում,արագ ներս է մտնում Սիլվիան,եւ մօտենում հայելու:Տոմ դիտում է նրան/:

Տոմ

Բաեւ օրիորդին:

Սիլվիա

Բարեւ ասողին ես բարեւ կտամ:

Տոմ

Ինչպէս աղքատին որ անցնողներին ձեռք է կարկառում:

Սիլվիա

Սրախօսութեան ժամանակը չէ:

Տոմ

Չե՞ս տեսնում...անդունդը: Միթէ հայելին այդ ցոյց չի տալիս քեզ: Ընկնում ես,ընկնում անդունդը:/Սիլվիան կարծես սթափւում է եւ հեռանում հայելու մօտից/:

Սիլվիա

Ես տուն եմ պահում,տուն,իմանում ես այդ:

Տոմ

Բայց թէ ինչ գնով...

ՍԻԼՎԻԱ – Ինձ անարգելու իրաւունք չունես

Տոմ

Զգուշացնում եմ միայն:

Սիլվիա

Ինձ վախեցնել չես կարող:

Տոմ

Կեանքդ այդպէս քարշ տալով,մի օր դու կըզգաս,կը տեսնես անկումդ,եթէ զգալու եւ տեսնելու կարողութիւնն իսկ չխլեն քեզնից:

Սիլվիա

Ինչեր ես ասում:Ես գիտեմ,ես գիտեմ իմ անելիքը:

Տոմ

Նրանք գալիս են մեզ մօտ վեհանձն մարդու դիմակը հագած,մտնում են մեր տունը սիրոյ եւ կարեկցութեան շարականներով,խաբում մեզ,եղծանում մեր հաւկացողութիւնը եւ այդպէս սպառում,քամում են մեր կեանքի ծուծը:

Սիլվիա

Թող ինձ.../ներս է մտնում Մէյրի/ Չեմ ուզում քեզ լսել:

Մէյրի

Դարձեա՞լ վէճ...Ձեր այդ ընթացքով ինձ գերեզման կը տանէք: Տօմ,ինչու վերջ չես տալիս: Իսկ դու Սիլվի,չի լի նի որ չպատասխանես:

Սիլվիա

Ա՞յ ինձ ինչ է տալ;ով է նա որ իմ քայլերին սահ - ման պտի դնի:

Մէյրի

Տօմ,թող նրան հանգիստ: Նա լաւ աղջիկ է,վատ բան չի անի:

/Սիլվիան ուզում է դուրս գնալ/

Տօմ

Ու՞ր ես գնում:

Սիլվիա

Հաշիւ տալու պարտական չեմ:

Տօմ

Ոչ որպէս եղբօր,այլ որպէս բանւոր ընկերի...

Սիլվիա

Թող ինձ:/զանգ:Մէյրին գնում է դուռը բանալու/ Թող ինձ:

/ Ներս է մտնում Էդվըրդ/

Էդվըրդ

Սիլվիա,ինչ՞ է պատահել:/Տօմին/ Ինչ՞ու էք խռովում ձեր տան հանգիստը:

Տօմ

Հապա ձեր արածը ինչ է:

Էդվըրդ

Ձեր ինչ գործն է:

Տօմ

Ճիշդ է: Սեփականազուրկ բանւորն ինչ ուզի,որ ունե- ցածի մասին խօսք անի: Նա տուն տեղ չունի,ոչ իսկ ընտա- նիք: Եւ ընտանիքը եւ յարկը ուր բնակում է տոկոսով,պայ- մանաժամով տրւած իրեր են: Այդ շնորհից էլ կարող էք զըր կել եւ կամ երկարացնել պայմանաժամը ձեր քէյֆի ու շահի համեմատ:

/Մէյրին որ քիչ ժամանակ առաջ դուրս էր եկած ներս է մտնում/

Մէյրի

Տօմ,ընկերներդ սպասում են քեզ:

Տօմ

Եկայ , եկայ:/Մէյրի եւ Տօմ դուրս են գնում/

Սիլվիա

Այս դրութիւնը տանելի չէ:

Էդվըրդ

Մոռացիր: Լեզւի մարզանք է:

Սիլվիա

Զափազանց ծանր:

Էդվըրդ

Մոռացայ ասել,որ վաղը երեկոյ ժամը տասին...

Սիլվիա

Տասին:

Էդվըրդ

...երբ երկիրը խաւարի խորը կը թաղուի եւ երկնքի կանթեղները կը հսկեն...

Սիլվիա

Ես եւ դու,դու եւ ես,ասել է թէ մի զոյգ աշխարհ խօսք են անելու,բան են ասելու,պատմելու են...

Էդվըրդ

Պատմելու անծանօթ հաճոյքի ծնունդը:

Սիլվիա

Օ,ինչ հաճոյք...

Էդվըրդ

Միշտ խոյս տուող գեղեցկութիւնը պիտի արձանանայ եւ մարմնիդ հմայիչ ձեւերը հայելիների մէջ պիտի տան մի այն պիսի պատկեր,որ աստուածներն իսկ կը նախանձեն:

Սիլվիա

Այո...ժամը ճիշդ տասին...

Էդվըրդ

Երբ կապոյտ երկինքը հորիզոնի եզրին,ծովի շրթներին կպած,կը պատմէ արեւի հրդեհումները,ես էլ քեզ...

Սիլվիա

Կը պատմես անվերջ հէքեաթներ...

Էդվըրդ

Հէքեաթներն անծանօթ յոյզի եւ մեծ հաճոյքի...ժամը տասին...

Սիլվիա

Ջեմ մոռանայ:

Էդվըրդ

Ցտեսութիւն,երազիս աղբիւր:

Սիլվիա

Ցտեսութիւն,օրերիս կեանք: /Էդվըրդ դուրս է գնում/

Մէյրի /որ ըոպէ առաջ ներս էր մտած/

Ուր ես գնալու:

Սիլվիա

Նրա հետ ման գալու այնպիսի վայրեր,որ բախտը ինձ մինչ այս տարիքս արժանի չէր տեսել,այնպիսի վայրեր,մայր, ուր,ասում են,հաճոյքն էլ երազ չէ այլ նիւթ է,ջուր է,որ վազում է յորդառատ աղբիւրների ակերից:

Մէյրի

Երիտասարդական երազներ...Մի գնա,մայրդ է խնդրում:

Սիլվիա

Մի եղիր յոռետես: Ինչու միշտ վատը նախագուշակել: Ասա ով չէր ուզի,քո ծանօթների որ մէկ աղջիկը սիրով չէր գնայ,երբ մի այսպիսի բացառիկ հրաւէր բաղխէր իր դուռը:

Մէյրի

Օ,աւելի երջանիկ եւ հանգիստ էի երբ աշխատանքով ձեզ պահում էի...

Սիլվիա

Մոռացել ես այն անարգանքը,որ մեզ բոլորիս եւ առաւել քեզ տալիս էր հայրս: Քո առած փողը քիչ էր գալիս նրա արաղին...

Մէյրի

Ինչ անէի,եղբայրդ մերժում էր օգնութիւն անել,քանի որ հայրը խմում էր այդպէս:

Սիլվիա

Իսկ ինձ,ինչ էր մնում ինձ անել այդ պայմաններում:

Մէյրի

Օ,մի ասիր այդ,մի ասիր...

Սիլվիա

Լսիր,մայր: Համեստութիւնը,ազնուութիւնը իր տեղը ունի: Մութ գիշերին ադամանդը փայլուն է,իսկ արեւի տակ հասարակ քար է երեւում:

Մէյրի

Հապա հասարակաց կարծիքը :

Սիլվիա

Հեղեղ է,մայր,ծովն էլ ընդարձակ: Իմ դասակարգի աղջիկների մէջ բացառութիւնը քիչ է:Բայց թէ բոլորն էլ աշխատում են եւ...մի կերպ ապրում:..Տեսնում ես հիմա, որ հայրս էլ գոհ է,ոչինչ չի պակաս,ամեն բան կարգին...ճիշդ է,որ եղբօրս հետ միշտ վէճի մէջ է,բայց...

Մէյրի

Եղբօրդ ձեռք մի տայ.նա իր արժէքով ոսկի է,ոսկի:

Սիլվիա

Բայց նա մոռանում է իր որդիական պարտականութիւնը, մոռանում իր իսկ ներկան,ապագան,երջանկութիւնը: Ուրիշի ցաւը,բախտը,դասակարգային կռիւը նրա սրտին ու մտքին աւելի մօտ է:

/Ներս է մտնում Մերցի քթի տակ երգ մռմռալով-"Նօ բադի նօզ հաու դրայ այ եմ"/

Մերցի

Պրօհիբիշընը...Տասը հազար շիշ պատւական ուիսկի ծովը են թափել անիծւածները...Հաւատալս չի գալիս:Ինիկ , էն կենսատու ջրից մի քիչ բեր տեսնեմ: Քըման,շարժւիր: Որդուդ խօսքերը աւելի շուտ ես լսում քան ամուսնուդ :

Մէյրի

Նա աւելի խելօք բաներ է ասում:

/ Սիլվիան հայելիի առաջ է,իր պայուսակը դրուած է աթոռի վրայ/

Մըրցի

Որդիդ...նա քամի է կուլ տուել,քամի եւ որքան առատ: Ամերիկայում որ եղանակին քամի չի փչի...Ջրման...բեր շրթներս թրջեմ:/Մէյրին դուրս է գնում:Մըրցին տեսնում է պայուսակը,վերցնում է եւ բանում:Սիլվիան նկատում է այդ եւ շտապում է ետ առնել:/

Սիլվիա

Տուր,իրաւունք չունես,իմն է:

Մըրցի

Թող տեսնեմ ինչ ունես: Նամակներիդ ձեռք չեմ տայ:

Սիլվիա

Տուր,տուր ինձ...

Մըրցի

Հաւատալս չի գալիս...օհօ,տասնոց,քսաննոց...Ահա թէ ինչու ես ուզում ձեռքիցս խլել:/դրամները գրպանում է եւ պայուսակը վերադարձնում/

Սիլվիա

Տուր ինձ,ետ տուր իմ փողը:..

Մըրցի

Ինչ փող է,աղջիկ:

Սիլվիա

Ասեմ,ասեմ թէ ինչ փող է...

Մըրցի

Ջէ,հարկաւոր չի...

Սիլվիա

Դա իմ կեանքի գինն է,պատի գինը,ետ վերադարձրու: Քո կարիքներին լի ու լի բաւարարութիւն եմ տալիս: Տուր ինձ այդ փողը:

Մըրցի

Ինչ ես ասում,աղջիկ:

Սիլվիա

Ա, մի լինի անգութ: Մի մերժեր խնդիրքս:Տուր...այդ փողի համար սուղ գին եմ խոստացել...

Մըրցի

Լաւ ես արել:

Սիլվիա

Ինչ...դու չե՞ս հասկանում:

Մըրցի

Լաւ եմ հասկանում: Փողի փոխարէն դիւրին է ծախել ամեն ինչ,ամեն ինչ...

Մէյրի

Նա աւելի խելօք բաներ է ասում:

/ Սիլվիան հայելիի առաջ է,իր պայուսակը դրած է աթոռի վրայ/

Մըրցի

Որդի՜ դ...նա քամի է կուլ տուել,քամի եւ որքան առատ: Ամերիկայում որ եղանակին քամի չի փչի...Ջըման...բեր շրթներս թրջեմ:/Մէյրին դուրս է գնում:Մըրցին տեսնում է պայուսակը,վերցնում է եւ բանում:Սիլվիան նկատում է այդ եւ շտապում է ետ առնել:/

Սիլվիա

Տուր,իրաւունք չունես,իմն է:

Մըրցի

Թող տեսնեմ ինչ ունես: Նամակներիդ ձեռք չեմ տայ:

Սիլվիա

Տուր,տուր ինձ...

Մըրցի

Հաւատալս չի գալիս...օհօ,տասնոց,քսաննոց...Ահա թէ ինչու ես ուզում ձեռքիցս խլել:/դրամները գրպանում է եւ պայուսակը վերադարձնում/

Սիլվիա

Տուր ինձ,ետ տուր իմ փողը:..

Մըրցի

Ինչ՞ փող է,աղջիկ:

Սիլվիա

Ասեմ՞,ասեմ թէ ինչ փող է...

Մըրցի

Ջէ,հարկաւոր չի...

Սիլվիա

Դա իմ կեանքի գինն է,պատւի գինը,ետ վերադարձրու: Քո կարիքներին լի ու լի բաւարարութիւն եմ տալիս: Տուր ինձ այդ փողը:

Մըրցի

Ինչ՞ ես ասում,աղջիկ:

Սիլվիա

Ա, մի լինի անգութ: Մի մերժեր խնդիրքս:Տուր...այդ փողի համար սուղ գին եմ խոստացել...

Մըրցի

Հաւ ես արել:

Սիլվիա

Ինչ...դու չե՞ս հասկանում:

Մըրցի

Հաւ եմ հասկանում: Փողի փոխարէն դիւրին է ծախել ամեն ինչ,ամեն ինչ...

Սիլվիա

Կտա՞ն վերջապէս...

Մըրֆի

Ուզիր ուրիշ բան բացի փողից, սիրով կտամ: Կուզես խմե՞մ կենացդ, պարե՞մ քեզ համար: Ասա, ամեն ինչ կանեմ, կեանքս էլ կտամ.../ներս է մտնում Մէյրին ուիսկիի շիշով եւ դնում սեղանի վրայ/

Մէյրի

/նկատելով աղջկայ վիճակը/ Ինչ կայ, ինչ կայ Սիլվիա:

Սիլվիա

Մայր.../երեսը թաքցնում է մօր կրծքի վրայ եւ լացլինում/: /զանգ/

Մըրֆի

Եկայ, եկայ.../գնում է դուռը բանալու, մինչ այդ Սիլվիան իրան շտկում է/:

Ֆուլըր

/ներս մտնելով/ Ինչ կայ, Սիլվիա: Ինչո՞ւ ես այդպէս: Վիրաւորե՞լ են քեզ:

/Մէյրին Ֆուլըրին տեսնելով, յուզւած արագ դուրս է գնում/

Մըրֆի

Իմ աղջկա՞ն: Աստուած չանէ: Քմահաճոյք է ուրիշ ոչինչ

Ֆուլըր

Նրա դէմքը մի բան է ուզում ասել: Ասա, ինչ՞ ես ցանկանում, միայն թէ իմ ուժից վեր չլինի:

Մըրֆի

Քո ուժից վեր:..կա՞յ մի բան որ անելու կարող չլինես

Սիլվիա

Բարի էք եկել եւ հազար անգամ, միայն այս եմ կարող ասել ձեզ:

Մըրֆի

Սիլվիա, դու չես հասկանում:

Ֆուլըր

Համեստութիւնը նրան թոյլ չի տայ, բայց արժանիքը որ նա ցոյց է տալիս գործարանում եւ իր բոլոր ձեւերում, պատճառ է որ ես նրան նէր տամ:/Գրպանից հանում է տուփը մանեակով եւ յանձնում Սիլվիային: Միւս գրպանից հանում է մի շիշ ուիսկի եւ տալիս Մըրֆիին/: Այս էլ ձեզ:

Մըրֆի

/տեսնելով մանեակը/ Բախտաւոր աղջիկ:

Սիլվիա

Սա ի՞մն է ասացիք:

Ֆուլըր

Դու արժանի ես աւելի մեծ նէրների:

Մըրֆի

Կենացդ:

Ֆուլըը

Մի հատ էլ Սիլվիայի կենացը:

Մըրֆի

Մէկ էլ,երկուս էլ:

Ֆուլըը

Գուցէ Սիլվիան էլ ցանկայ իմ կենացը մի բաժակ առնել

Սիլվիա

Սիրով:/Խմում է/

Մըրֆի

Մի բաժակ էլ բեր,Սիլվիա,որ այս ուրախութեան մեր թանկագին հիւրն էլ մասնակցի:

/Սիլվիան գնում է դուրս/

Մըրֆի

Ինչ՞ ես մտածում:

Ֆուլըը

Թէ կա՞յ միջոց շահել դառնալու:

Մըրֆի

Ո՞վ կասի որ ծերացել ես,քանի գրպանդ լիքն է:

Ֆուլըը

Ինչպէ՞ս:

Մըրֆի

Ջահելութիւնը տարիքի հարց չէ,այլ դրամի:

Ֆուլըը

Իրա՞ւ ես:

Մըրֆի

Ասածս միթէ խելքի մօտ չի/Ֆուլըը շարժում է ուսերը:/ Դու որ առիթից օգուտ չքաղես,յանցանքը իմը կը լինի

Ֆուլըը

Ու՞ր մնաց Սիլվիան...

Մըրֆի

Գնամ կանչեմ/դուրս է գնում/:

/Այդ պահուն ներս է մտնում Մէյրի/

Ֆուլըը

Բարեւ,տիկին:

Մէյրի

Մի ըոպէ եկայ հարցնելու թէ այդ ինչ մանեակ է որ տուել ես Սիլվիային:

Ֆուլըը

Այդքան պարզ բանը չկարողացար գուշակել:

Մէյրի

Ոչ:

Ֆուլըը

Որդուս նուէրն է:

Մէյրի

Հօր/Լսիր, չեմ ուզում, որ անցեալը կրկնուի: Ասա որդուդ, որ իր նման խաղ չսարքէ: Սիլվիան լաւ աղջիկ է:

Ֆուլլը

Անհոգ կաց. այդ բանը չի պատահի: Կը հսկեմ նրան, որ սխալ քայլ չառնի: Սա փոխ հատուցումի մի ձեւ է:

Մըրֆի/ներս մտնելով/

Ինչ՞ ես մանում, կնիկ: Երեւի մանեակի տեսքը երիտասարդ օրերդ յիշեցրեց: Տես որ Սիլվիան իսկոյն գայ այստեղ

/Մէյրի դուրս է գնում/

Ֆուլլը

Ճիշդ են ասել, որ Ամերիկան պատեհութիւնների միակ երկիրն է:

Մըրֆի

Մի տեսակէտով: /ներս է մտնում Սիլվիան հագած գիշերազգեստ եւ մանեակը վզին/: Էդ մանեակը քանի՞ արժէ:

Ֆուլլը

Ոչինչ, միայն խնդրում եմ...

Մըրֆի

Խնդրում ես... Ասա, հրամայիր:

Ֆուլլը

Խնդրում եմ, որ Սիլվիան մի երգ ասի: Կերգե՞ս ինձ համար, Սիլվիա:

Մըրֆի

Ի հարկէ... Երգիր, աղջի:

Սիլվիա/երգում է/

Տարին ինծի մի օր է,
Օրը քեզի տարի է,
Ես եմ օրը, ես կեանքն եմ,
Դու չես գիտի ես ով եմ:

Սէրն իմ սրտում ծաղիկ է,
Մինչ քեզ համար մի փուշ է,
Ես եմ սէրը, ծաղիկն եմ
Դու չես գիտի ես ով եմ:

/Էդվըրդ դուրսը դրան առաջ ականջ է դնում երգին: Մինչ այդ սենեակում նրա հայրը Սիլվիայի ձեռքը բռնած, հիացած փորձում է մի բան ասել եւ չէ յաջողում/:

Էդվըրդ/դուրսը, երգից յափշտակուած/

Դու, արեւածագի անուշ մեղեդի, դու, կնքած սիրերգ, կարաւանը կանգ պիտի առնէր քո դաշն ձայնը լսելու համար: Նա ինքն էլ չի իմանում, որ թռչունների քունն է խանգարում

.../զանգահարում են/

Մըրցի

Ես բաց կանեմ/ներս է մտնում Էդվըրդ/

Ֆուլըր

/որ տակաւին բռնած է Սիլվիայի ձեռքը,նեղուած/ Ինչ կայ:

Էդվըրդ

Ինձ հաղորդեցին,որ բանւորները լքել են գործը եւ սպառնացել...

Ֆուլըր

Սպառնա՞ցել:

Էդվըրդ

Այո:

Ֆուլըր

Ո՞ր գործարանն է:

Էդվըրդ

Թիւ մէկ,թիւ երկու եւ երեք: Ցոյց է պատրաստւում...

Ֆուլըր

Գնա շուտով: Միջոցների մէջ եւ ոչ մէկ խտիր:Բնակարանազրկումն իր ամբողջ ուժով պէտք է գործ դրւի:

Էդվըրդ

Բայց...

Ֆուլըր

Գնա ասում եմ;/Էդվըրդ ուղղւում է դէպի դուռը/:

Սիլվիա

Էդվըրդ.../Էդվըրդ դուրս է գնում/:

Ֆուլըր

Զունիմ բառեր գովելու քո անուշ երգը:Այդ պակասը այսպէս կամբողջացնեմ:/գրում է մի չէք եւ յանձնում Սիլվիային/: Ահա ուրախ կեանքի գրաւականը:/Մըրցիին/ կարող է Սիլվիան ընկերանալ ինձ:

Մըրցի

Ի հարկէ:Սիլվիան ձեզ մենակ չի թողնի:

Ֆուլըր

Քո փափագն ինչ է,Սիլվիա:

Սիլվիա

Գնամ պատրաստւեմ:/դուրս է գնում/

Մըրցի

Իմ բաժինն ինչ է:

Ֆուլըր

Որքա՞ն ես ուզում:

Մըրցի

Հաւ ապրանքին լաւ գին են պահանջում:

Ֆուլըր

Որքա՞ն:

Մըրֆի

Ինչքա՞ն կտաս:

Ֆուլըը

Այնքան,որ գոհ մնաս:

Մըրֆի

Ապրանքը իմն է,չէ՞:

Ֆուլըը

Կը փոխանակենք:/գրում է մի չէք եւ յանձնում/ գո՞հ ես:

Մըրֆի

Հինգ հարիւր դոլլար...խմենք...կենացդ:

Ֆուլըը

Մէկ էլ,..

Մըրֆի/Սիլվիային որ ներս է մտնում/

Սիլվիա,կենացդ: Ապրիր երջանիկ: Երգիր,միշտ երգիր: Գնացէք բարով/Սիլվիա եւ Ֆուլըը դուրս են գնում/:Պարոն հինգ հարիւր,խմեմ քո կենացն էլ: Կենացդ Մըրֆի,կեանքումըդ այսքան փող չէիր տեսել: Ինչ լաւ է առանց յոգնու – թեան փող վաստակելը: Հաւ բան կը լինէր եթէ տղես էլ աղ- ջիկ եղած լինէր: Կեանքումս էսքան լաւ եւ երկար չէի խո- սած:/խմում է/:Փողի ուժն է: Վաղը ինձ չեն ճանաչի ... ինքս էլ տարակուսում եմ որ ես նոյն Մըրֆին եմ: Տունն էլ փոխուում է,պալատ է դառնում.../ներս է մտնում Մէյրի/ Պտոյտ է գալիս,պտոյտ:../փնտռում է շիշը/Կնիկ,խնայողու- թեան ժամանակը չի,ուր ես տանում կենաց շուրը: Հցրու մի գաւաթ,մէկն էլ քեզ համար...հինգ հարիւրից դու լուր չու- նես.../բարձրաձայն/Մէյրի...

Մէյրի

Ինչ է պատահել:

Մըրֆի

Հցրու եւ ինձ տուր:

Մէյրի

Ուր է Սիլվիան:

Մըրֆի

Կնիկ,քէֆս մի փչացրու:Խմիչքն առատ,դրամը,էն էլ կարգին է...

Մէյրի

Ուր է Սիլվիան:

Մըրֆի

Գնաց,գնաց...Նրա կենացը,մէկ հատ էլ: Դու էլ,դու էլ խմիր աղջկանդ կենացը...Ուզում ես իմանալ,վաղը կը պատմեմ...

Մէյրի

Ասա,ուր է,ուր գնաց:

ՄըրՁի

Ինչ լաւն է, էլ դարդ չմնաց, հոգ չմնաց:

Մէյրի

Ո՞ւմ հետ գնաց:

ՄըրՁի

Ում հետ գնաց...ձեւացնում ես, որ չես հասկանում, հա՞

Մէյրի

Աղջիկս, աղջիկս...գնա, ետ կանչիր, շուտ...

ՄըրՁի

Կգայ, շատ հոգ մի անի, օտարի հետ չէ...Թող ես էլ երջանիկ ապրեմ: Տես, տեղափոխւում եմ հին աշխարհից մի նոր աշխարհ: Էնտեղ ամեն ինչ թեթեւութիւն է, ամեն ինչ առատ, խմիչքը առատ...տեսնում ես գոյները, դեղինը, կապոյտը, նարին ջագոյնը.../ձեռքով ուզում է փարատել աչքին կոխած մշուշը/ Քեզ էլ եմ տեսնում, Մէյրի...

Մէյրի

ՄըրՁի...

ՄըրՁի

Մի, մի ընդմիջիր...էս գիշեր դու էլ սիրուն ես երեւում...Աղջիկդ...Հա, հա, ուր է իմ աղջիկը, ուր է Տօմը... Ինչու էսպէս եմ զգում ինձ...Գնա, դու գնա կանչիր...Առաջին անգամն է որ կարօտն եմ զգում...Բարի աղջիկս, բարի... Համբուրիր նրան...Որդիս...Տեսնում եմ, տեսնում եմ նրան հազարների մէջ, հազարների հետ...Որդիս, անարժան հօրը արժանաւոր որդին...

Մէյրի

Օգնութիւն, օգնութիւն...աղջիկս...պատիւը...մարդ չը-կա՞յ...

/Մտնում է Տօմը ձեռքին մի կապոց թռուցիկներ: Մէյրին վազում է դէպի նա/

Մէյրի

Տօմ, Տօմ, օգնութիւն...

Տօմ

Մայր, գիտես որ սա առաջին անգամը չէ. հայրս վերջերը յաճախ ենթակայ է այս դրութեան:

Մէյրի

Աղջիկս, Տօմ, աղջիկս: Ետ դարձրու, ինձ մօտ բեր... քոյրդ տարել են...Գնա, վազիր...

Տօմ

Հանդարտիր, մայր:

Մէյրի

Պարոն Ֆուլերի հետ է գնացել...

Տօմ

Գնացե՞լ է...Անշուշտ իր կամքով:

Մէյրի

Մի ասիր այդ,խաբել են նրան: Քոյրդ է,քոյրդ է.նա վատ աղջիկ չէ: Նա զոհ է գնում,զոհ բոլորիս համար: Տես, արաղը հօրդ ուղեղում հրդեհ է գաձել,միտքն է խանգարել, աղջկան է յանձնել: Գնա,մի դանդաղիր,քոյրդ քեզ է սպասում,իր եղբօրը,որ երթայ թեւից բռնէ,բորենի ճանկից ազատէ եւ վերադարձնէ իր տունը,իր մօրը: Այդ ինչ է: Թող, մի ուրիշ առթիւ կերթաս կը ցրւես.../Մերցիին/Ասա, ուր են գնացել: Պապանձւել է...տես աչքերը.ուզում է մի բան ասել,չի կարողանում: Քեզ է նայում,քեզ է ուզում:

/Տոմ մօտենում է հօրը եւ աշխատում է հասկանալ նրան/

Մերցի

Որը...դիիս,քո...ճամբաան լաաաւ է...կերռռիւ... /աշխատում է համբուրել Տոմին/ կերռռիւ.../աչքերը գոցում է եւ մնում անշարժ/:

Մէյրի

Մի ճար արա,Տոմ: Օգնութիւն հասցրու:

Տոմ

Օգնութեան են կանչում հազարաւոր մայրեր եւ քոյրեր:

Մէյրի

Մօրդ,նախ մօրդ ձայնը լսիր: Տեսնում ես որ քոյրդ զոհ են տանում,մայրդ էլ արցունքի մէջ է խեղդւում...

Տոմ

Ինչ՞ ես ուզում ինձնից:

Մէյրի

Ուզում եմ որ հասկանաս մօրդ տառապանքը,քրոջդ անարգանքը...Ինչո՞ւ այդպէս անռութ ես:

Տոմ

Ինչ՞ ես ուզում որ անեմ:

Մէյրի

Խելքի գաս: Սթափւիս: Ճանաչես որդիական պարտաւորութիւնդ: Ուզում ես որ շարունակեմ՞,ասեմ ով եւ ինչ է ...եղած դարձածը...պատմեմ աւելի զարհուրելին...

Տոմ

Օ,ատում եմ,ատում եմ կեանքի այդ դրւագները;արհամարհում եմ այդ բոլորը:/առնելով թռուցիկները ուզում է դուրս գնալ/

Մէյրի

Դու չես գնա,չես գնա:

Տոմ

Եթէ արցունքը ծովանայ,դարձեալ կը գնամ դէպի սուրբ գործը: Ոչինչ չի կարող կասեցնել իմ վազքը դէպի պարտականութիւն:

/Տօմը արագ դուրս է գնում/

Մէյրի/շւարած մօտենում է Մըրցիին/

Մարդ,մարդ,տունդ տեղդ քանդուում է։դու այստեղ հարբած ընկած ես։ Տուր,մի հատ էլ ինձ տուր խմեմ։ Չես լսում...Ասացիր,որ քաղցը երազ է,տուր խմեմ,ես էլ երազեմ, մօր վերջին երազը։/խմում է/ Լաւ է,լաւ է։..կրակը լցուեց սրտումս։/կրկին խմում է/ Թող վառի,վառի եւ յետոյ մարի կրակը,կեանքը...

/Ներս է մտնում էդվըրդ մի թռուցիկ ձեռքին/

Էդվըրդ

Ուր է հայրս,ո՞ւր է հայրս։

Մէյրի/արձագանքի պէս/

Ուր է աղջիկս...

Էդվըրդ

Ինչ ասացիր։

Մէյրի/սթափւում է/

Աղջիկս,ուր է աղջիկս...

Էդվըրդ

Ինձնից ես հարցնում։ Ես հայրս եմ փնտռում։/Ուղղըւում է դէպի դուռը,կանգ առնում,նայում է թռուցիկին , մինչ այդ միջոցին Մէյրին դարակից դուրս է բերում ատրճանակ եւ թաքցնում ետեւը եւ կտրում էդվըրդի ճանապարհը։/

Մէյրի

Հապա ամսաւճարները չե՞ պահանջում։

Էդվըրդ

Ժամը 12-ին արդէն դադարում է սեփականութեան ձեր իրաւունքը։ Այդ մասին վաղը։

Մէյրի

Չես կարող գնալ այստեղից,մինչեւ որ հայրդ չվերադառնայ եւ ինձ հաշիւ տայ։

Էդվըրդ

Հաշի՞ւ տայ,..ի՞մ հայրը։

Մէյրի

Քո հայրը...տուն քանդող քո հայրը։

Էդվըրդ

Այդ ռամիկ լեզուն ինձ անծանօթ է։/փորձում է դուրս գնալ/

Մէյրի

Պէտք է մնաս մինչեւ որ հայրդ,քո արժանի հայրը վերադարձնէ ինձ իմ աղջկան։

Էդվըրդ

Տիկին,սխալւում էք։ Երկինքը որքան էլ ցածանայ գետնին չի դպչի։

Մէյրի

Պարոն, այդ անարգանքը ...

Էդվըրդ

Պատրաստ եմ փոխադարձ վճարելու:

Մէյրի

Զափազանց սուղ գին կը պահանջեմ:

Էդվըրդ

Որքա՞ն:

Մէյրի

Ձեր կեանքը:/Էդվըրդ առանց պատասխանելու ուզում է դուրս գնալ:Մէյրի ատրճանակը ուղղելով նրա դէմ/ հրամայում եմ մնաս:

Էդվըրդ

Կորէք ծախւած հոգիներ: /ձեռքով հրում է Մէյրիին, որը սակայն, հաւասարակշռութիւնը պահելով, յանկարծ կրակում է: Էդվըրդ ընկնում է նախագաւիթի եւ սենեակի անցքի մօտ:Մէյրիի ձեռքից վայր է ընկնում ատրճանակը: Մեծ ճիգով նա մօտենում է իր ամուսնու մահացած մարմնին եւ ծունկ ընկնում: Լռութիւն.../

Մէյրի

Զարթնիր, զարթնիր...Սարսափը մօտեցնում է ինձ քեզ: Զարթնիր, տունը փլչում է գլխիս: Գնանք, հեռու գնանք.այս մեր տունը չէ, նրանցն է, նրանց գերեզմանը:/ձեռք է տալիս ամուսնու ճակատը եւ սարսափում/ Բայց...բայց...ոչ, ոչ... մեռած...Անկարելի է, անկարելի է.../նւաղում է/:

/Մտնում է Տօմը:Տեսարանը հանելուկ է նրա առաջ: Աճապարում է մօրը եւ հօրը մօտ, նայում է շուրջ շւարած/:

Տօմ

Սպանութիւն...մահ...Ինչո՞ւ, ինչ՞ է պատահել...Մայր, հայր.../զսպում է իրան եւ պահպանում պաղարիւնութիւնը:/

/Մի ոտնաձայն, ապա մի ձայն տան ներսի կողմից/

Սիլվիա/կանչելով ներսից/

Մայր, մայր...ես եմ, Սիլվիան:..

Տօմ

Սիլվիա...

Սիլվիա/ներս մտնելով/

Եղբայր...

Տօմ

Մի գաւաթ շուր, շուտ:/Սիլվիան դուրս է գնում/Տօմը նկատում է տախտակամածի վրայ ատրճանակը, վերցնում, զննում է , նայելով մերթ մօրը, մերթ հօրը, մերթ Էդվըրդին: Մտնում է Սիլվիան ջրով լի բաժակը ձեռքին: Նրա զգեստները պատառոտւած են, մազերը ցրւած: տեսարանից յանկարծ ապշահար ցնցւում է եւ գաւաթը ընկնում է գետին:/

Սիլվիա

Տոմ.../վազում է դէպի մայրը եւ գրկում նրան։մինչ այդ Տոմը արագ դուրս է գնում եւ մի գաւաթ շրով վերադառնում եւ յանձնում Սիլվիային։ Ուժեղ զանգահարութիւն։ Տոմ ատրճանակը ձեռքին վազելով մէջ կրկին զանգ։Տոմ ատրճանակը թաքցնում է գրպանում եւ գնում է դուռը բանալու։/

Մէյրի /սթափելով/

Սիլվիա,..հոգիս,կեանքս...

Սիլվիա

Այո,մայր,ես եմ.../գլուխը թաքցնելով մօր գիրկը խուլ հեկեկում է։/

Ոստիկանները /դրսից/

Բացէք դուռը,թէ ոչ կը փշրենք։

/ Տոմ բացում է դուռը/

Մի ոստիկան/ներս մտնելով,նրա ետեւից երկու ուրիշ/

Ո՞վ է այստեղ Տոմ Մըրֆին։

Տոմ

Ես եմ։

Ոստիկան/մօտենալով խմբին/

Մեռած...

/Սիլվիա շանթահար նայում է շուրջը/

Երկրորդ ոստիկան/եղվերդի դիակի մօտ/

Էստեղ սպանուած մարդ կայ։

Առաջին ոստիկանը

Խուզարկեցէք այս մարդուն։

/Երկու ոստիկան խուզարկելով,Տոմի գրպանից հանում են ատրճանակը/

Առաջին ոստիկանը

Ձեռքակալեցէք։

Մէյրի/ոտքի ելնելով/

Նա չէ,նա չէ սպանել։

Առ.ոստիկան

Օրէնքը կասի թէ ո՞վ է սպաննել։

Սիլվիա/դէպքից անտեղեակ/

Թողէք եղբօրս...Իրաւունք չունէք...Ատում եմ,ատում եմ ձեր օրէնքները...ձեր անիրաւ աշխարհը...

Տոմ

Սիրում եմ,քոյր,քո հոգու այդ ըմբոստացումը,քո մըտքի այդ ուժեղ բեկումը։ Աշխարհը փուչ չէ,այլ փտածը,անիրաւը կապիտալիզմի կառուցածքն է,որի վերջն է հասել։

Առ. ոստիկան

Քըման,շարժուիր։

Մէյրի

Անէծքի կրակ կը թափեմ ձեր գլխին։ Թողէք իմ որդուն։

Առ. ոստիկան

Յեղափոխականը, մարդասպանը պիտի կրէ իր պատիժը։

Սիլվիա/փաթաթելով Տօմին/

Չեմ թողնի, չեմ թողնի...Կորէք վարձաձներ, կապիտա-
լիզմի լակէյներ...

/ոստիկանները փորձում են դուրս տանել Տօմին/

Մէյրի/բաձագան չելով/

Տօմ.../փաթաթւում է Տօմի ծնկներին/

Տօմ

Քոյր, պայքարողների շարքերը մտիր։ Մասսաներ գրոհ
են տալիս...կապիտալիզմը քանդւում է, հիմքից քանդւում։

/ոստիկանները քարշում են դուրս/

ՎԱՐԱԳՈՅՐ

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԷՋ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՃԻՇԴ
10	13	Մասնակի	Մասնաւոր
7	2	Ուրկանդ	Ուռկանդ
10	20	Ձենք կարող	Ձենք կարող վճարել
13	8	Ձ•ր	Ձօռ
15	Նախավերջի	Բա ա ել	Բաժանել
28	3	Որ իր նման	Որ իր հօր նման
28	12	Ճաիշդ	Ճիշդ

ՀՍՍՌ-Արմ ՍՍՀ
Մ. Հ. Մեսրոպյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0328505

2